# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք. հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ավագանու 21.05.2019 թվականի թիվ 11 և 12-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

Հ Հ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք. հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 21 » մայիսի 2019 թվականի թիվ 11

## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ, ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑ 13-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1 ին մասի 42-րդ կետով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ մասնակցելու Ջրաշեն համայնքի 10-րդ փողոցի վերակառուցման և լուսավորության համակարգի կառուցման սուբվենցիոն ծրագրին:
2. Համաձայնություն տալ մասնակցելու Ջրաշեն համայնքի 8-րդ փողոց 13-րդ նրբանցքի փողոցային լուսավորության համակարգի կառուցման սուբվենցիոն ծրագրին:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | | | |
| 2.Կարապետ Ռոստոսյան | | | |
| 3.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 4.Մացակ Ռոստոսյան | | | |
| 5.Ժորա Մկրտչյան | | | |
| 6.Սպարտակ Թումասյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» մայիսի 2019 թվականի N 12-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | | | |
| 2.Կարապետ Ոսոսյան | | | |
| 3.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 4.Մացակ Ոսոսյան | | | |
| 5.Ժորա Մկրտչյան | | | |
| 6.Սպարտակ Թումասյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՈՍՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ջրաշեն համայնքի ավագանու
2019 թվականի մայիսի 21-ի N 12-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Քրիստինե Գուրգենի Ասատրյանին- 20.0հազար դրամ:(երեխայի ծննդյան գումար)
2.Լիլիթ Արմենի Մանուկյանին -20.0հազար դրամ:(երեխայի ծննդյան գումար)
3.Հասմիկ Կամոյի Տեր-Վարդանյանին-20.0հազար դրամ:(երեխայի ծննդյան գումար)
4.Արևիկ Սերժիկի Գասպարյանին-40.0հազար դրամ:(երեխայի ծննդյան գումար)

5.Գոհար Նորիկի Ուռուսյանին – 100.0 հազար դրամ: (հուղարկավորման ծախս)
6.Վահան Ռաֆիկի Մարուխանյանին –50.0 հազար դրամ:(հուղարկավորման ծախս)

7.Վարսենիկ Ռուզվելտի Պապիկյանին – 100.0 հազար դրամ: (բուժման գումար)
8. Անահիտ Լևիկի Մելոյանին – 40.0 հազար դրամ:(դեղորայքի ձեռքբերում)
9.Նորայր Ռոբերտի Զարգարյան-50.0 հազար դրամ: (բուժման գումար)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 440.0 հազար դրամ:

ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ